ՓԻԼԻՊՈՍ ԱՂԲԱԿԵՑՈՒ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Փիլիպոս Աղբակեցին Մովսես Գ. Տաթևացու աշակերտն էր, նրա լավագույն սաներից մեկը: Իզուր չէ, որ մահվան մահճում, երբ վարդապետներով ու եպիսկոպոսներով շրջապատված Սյունեցուն հարցնում են, թե իրենից հետո ու՞մ է հարմար տեսնում կաթողիկոսական աթոռին, Մովսեսը մատնացույց է անում Փիլիպոսին:[1]

Սիմոն Երևանցին այս մասին գրում է. «Ի ժամ վախճանի իւրոյ երանելին Մօսէս կոտակ աւանդէ, զի զկնի իւր նստցի Փիլիպպոս վարդապետն Հաղբակցի, որ էր աշակերտ իւր: Որ և նստաւ իսկ ի ՌՃԲ թուոջն մերում ի ժամանակս թագաւորացն Պարսից Շահ. Սեֆուն և Օսմանցւոց Սուլթան-Մուրատին»:[2]

Փիլիպոսը ծնվել է Աղբակ գավառի էրնկան գյուղում 1593-ին:[3] Մանուկ հասակից ստացել է հիմնավոր հոգևոր կրթություն՝ աբեղայից հասնելով եպիսկոպոսության աստիճանի (1630 թ.): Մովսես կաթողիկոսի մերձավորներից էր, ամենայն բարեխղճությամբ կատարում էր նրա հանձնարարությունները:[4]

Դեռևս եպիսկոպոսական տարիներին մեծ աշխատանքներ է կատարել Մովսես վեհափառ հայրապետի հանձնարարությամբ. «Եւ կացեալ 'ի վանքն, և ոչ ելեալ 'ի վանից արտաքս բնաւ, մինչև յայտնեցաւ երկրորդ Լուսաւորիչն Մովսէս վարդապետն Տաթևացի. և գնաց Փիլիպպոսն, և յարեցաւ 'ի նա. և շրջէր ընդ նմա՝ ուր և գնայր. և ոչ մեկնեցաւ 'ի նմանէ, մինչև եղև Կաթուղիկոս՝ Մովսէսն, և օրհնեաց զՓիլիպպոսն՝ եպիսկոպոս, և առաքեաց 'ի վանքն Բջնւոյ՝ իշխել նմա. ետ 'ի նա և զՔանաքեռ՝ 'ի պատիւ նմա՝ ձեռագրով, զի մինչ կենդանի է նա՝ լիցի նմա, և յետ նորա լիցի Քանաքեռ՝ վանքին իւրոյ. և ահա կայ գիրն այն: Եւ գնացեալ 'ի վանքն, և ժողովեաց զմիաբանս աւելի քան զՋ: Ուղղեաց նախ զկարգս հոգևորս, զսահմանս աղօթից, և ապա զմարմնաւորս: Նորոգեաց և զխախտեալ տանիս եկեղեցւոյն, շինեաց և փայտեայ գաւիթ 'ի վերայ արևմտեան դրան Եկեղեցւոյն, և զտնտեսատունն, և զխցերն. շինեաց և ծիթաղացս, և ջրաղաց, զգոմս անասնոց, և զախոռս ձիուց, և զփարախս խաշանց»:[5]

---

[1] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 241-242:
[2] Սիմէօնէ կաթուղիկոսէ Երեւանցւոյ Ջամբռ, Վաղարշապատ, Ս. Էջմիածնի., 1873: էջ 22:
[3] Սաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Բ,: Ս.Էջմիածին, 2001, էջ 2820-2821:
[4] Մեսրոպ արք. Աշճյան, էջեր հայ եկեղեցւոյ պատմութենէն, Երեւան, 1994, էջ 173:
[5] Ջաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հատոր առաջին, ՈՅԻ-1870, ի տպ. Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, ի Վաղարշապատ, էջ 75-76:

Նորոգել է Թուրք-պարսկական պատերազմների ժամանակ խարխլված էջմիածնի կառույցները. այստեղ դպրոց է բացել, ընդօրինակել տվել բազմաթիվ ձեռագրեր: Ժամանակին էջմիածնում շինարարական մեծ գործունեություն է ծավալել Փիլիպոս կաթողիկոսը:

Դեռևս 1627 թ. այստեղ նորոգման աշխատանքներ էին սկսվել Մովսես Գ Տաթևացի (1629-1632) կաթողիկոսի հրամանով: Վերջինս արտաքուստ և ներքուստ ամրակայել էր տվել խարխլված պատերը, վերականգնել ծածկը և այլն: 1633 թ. սկսած Փիլիպոս կաթողիկոսի հրամանով շարունակվում են նախորդի սկսած նորոգչական աշխա-տանքները, սկսվում նորերը: Օրինակ՝ սալահատակվում է վանքի բակը, ավարտվում է տանիքների ծածկասալման աշխատանքը: Ավարտին է հասցվում սեղանատան կից սենյակների շինարարությունը: Ծավալվում են նոր շինարարական աշխատանքներ, որոնց մեջ, հատկապես հիշատակության է արժանի 1653-ին սկսված զանգակատան (կառուցողներն են՝ վարպետներ Սահակը, Մովսեսը, Մուրադը, Վասպուրականի Խիզան գավառից) շինարարությունը, որն ավարտվում է Հակոբ Ջուղայեցու (1655-1680) օրոք՝ 1658 թ.:[6]

Էջմիածնի տաճարի զանգակատան ծաղկազարդման գիրը փորագրված է տաճարի մուտքի բարավորի վերին մասում.

Շնորհիւ աստուծոյ եւ աւժանդակութեամբ սրբազան կաթուղիկոսացն Փիլիպպոսի եւ Յակոբայ հրաշակերտեցաւ զանգակատունս եւ ծաղկեցաւ ի թվ .ռնժգ.[7]:

Իբրև կաթողիկոս ճամբորդություն է ձեռնարկել դեպի Նոր Ջուղա և այնտեղից էջմիածին տեղափոխել Գրիգոր Լուսավորչի աջը: Այն հայոց եկեղեցու ամենանվիրական սրբություններից մեկն էր, ինչպես Մաղաքիա Օրմանյանն էր բնորոշում. «աղբիւրն էր օրհնութեանց եւ կնիքը հայրապետական իշխանութեան»:[8] Հայաստանից պարսկաստան էր տարվել 1612թ. Շահաբասի հրամանով: 1637-ին, Փիլիպոս կաթողիկոսի Սպահան այցելության ժամանակ, այն գտնվում էր խոջա Սաֆարի մոտ: Աջի տեղափոխելը կապված էր երկու մեծ բարդությունների հետ՝ խոջայի սերունդների համաձայնությունը, իսկ առաջին

---

[6] Ջաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հատոր երկրորդ, ՈՅԻ-1870, էջ 46: Տես նաև՝ Վ.Մ. Հարությունյան, էջմիածին, Երևան, 1978, էջ 9:

[7] Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց, հատոր առաջին, էջմիածին, 1842, էջ 27-28: Տես նաև՝ Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեց Կ.Կոստանեանց, Ս.-Պետերբուրգ, 1913, էջ 189:

[8] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Բ, էջ 2820-2821:

հերթին՝ արքայական հրովարտակը: Մեծ ջանքերի գնով կաթողիկոսը երկու խնդիրն էլ լուծում է:

Այցելություն է կատարել Երուսաղեմ՝ որտեղ Սիսի կաթողիկոսի և Երուսաղեմի պատրիարքի հետ գումարել է եկեղեցական ժողով՝ ճշգրտելու երկու կաթողիկոսական աթոռների իրավունքները: Հայ ազգային վեճերը հարթեցնելու համար այցելել է Կ.Պոլիս:[9] Նորոգել է Գայանեն ու Հռիփսիմեն, Սևանից և Արագածից ջուր է բերել Էջմիածին[10]: Փիլիպոս կաթողիկոսի հրամանով, 1652-ին իրականացվում են Էջմիածնի Սբ. Գայանե եկեղեցու հիմնավոր վերականգնման աշխատանքները: Ամրակայվում են խարխլված պատերը, տանիքը, գմբեթի թմբուկն ու վեղարը, թարմացվում քանդակները: Ահա ինչ է գրում ժամանակակիցն այս մասին. «Սա արար շինուածս ի սուրբ Հռիփսիմէն, տունս գեղեցկաշէն, հրուանդանս և հովանոցս. և հաստատեաց Միաբանս: Նոյնպէս և ի սուրբ Մայրն Գայիանէ շրջապատեալ պարսպեաց. և յարևմտեան դրանն արտաքոյ կողմանէ շինեաց խորանս, և ի նոյն տեղին հիւսիսոյ կողմն շինեաց զգերեզմանն իւր, զտնտեսատունս և զխուցսն. և հաստատեաց և Միաբանս, զի ժամ և պատարագ մատչի հանապազ: Այլ և կանգնեաց կճեայ Կաթուղիկէ ի վերայ Իջման տեղին. և հաստատեաց սեղան՝ առնել պատարագ. և յերկու կողմն եկեղեցոյն բարձրացոյց յերկրէ, և արար ամպիոն, և կանգնեաց սեղան պատարագի: Եւ շինեաց որմն ի մէջ եկեղեցոյն ի հարաւոյ դրանէն մինչև ի դուռն հիւսիսոյ. զի անդ կացցեն յաղօթս, և մի առաջի աւագ խորանին: Եւ ի տանիս եկեղեցոյն յերիս տեղիս կանգնեաց Կաթուղիկէ»:[11]

1653-ին վերանորոգման աշխատանքներ են իրականացվում Սբ. Հռիփսիմեի խարխլված տաճարում: Այստեղ վերանորոգվում են տանիքի ծածկասալերը և գմբեթը՝ թմբուկով ու վեղարով:

Փիլիպոսի հրամանով նորոգվում է Սբ. Հեռիփսիմե եկեղեցու խարխլված տանիքը և դրվում չորս սյուների վրա կանգնած արևմտյան զանգակատունը, որի պատին, Կոմիտաս կաթողիկոսի արձանագրությունից վերև փորագրել տալիս հետևյալ գիրը.

Ի թուիս ռՃԹ. Քրիստոսի ծառայ Փիլիպպոս կաթուղիկոս ամենայն հայոց վերստին նորոգեցի զեկեղեցի սրբոց կուսանացն Հռիփսիմեայ եւ Գայիանեայ.[12]

---

[9] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, Բ, էջ 2820-2821: Թուղթ Սիմեոնի Սսոյ կաթուղիկոսի առ Փիլիպոս էջմիածնի կթուղիկոս, Հուսիկ արքեպիսկոպոս Տեր-Սովսիսյան,երկերի ժողովածու, Ս.Էջմիածին, 2009, էջ 219-242:

[10] Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ե, Երևան, 1962, էջ 205:

[11] Ձաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հատոր երկրորդ, էջ 107:

[12] Ստորագրութիւն Կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց, հատոր առաջին, էջ 264: Տես նաև՝ Վիմական տարեգիր, էջ 184:

Աղբակեցու կատարած մեծածավալ աշխատանքների մասին մեծ գովեստով է հիշատակում կաթողիկոս Սիմեոն Երևանցին. «Արդ ի յԱթոռոջս որքան փայտեայ շինուածք գոյին՝ յառաջմանէ աւերեցեալք էին, զամենեսեան շինեաց սա և վերստին նորոգեաց: Զեկեղեցւոյ տանիսն՝ բաց ի գմբեթէն՝ զբովանդակն նորոգեաց: Զարևելեան խուցսն շինեաց քարիւ և աղիւսով գեղեցիկ յօրինուածովք: Զամռան սեղանատունն քարեայ շինեաց վերստին: Զշրջապատ շարսն եկեղեցւոյ և առաջի խցացն սա շինեաց: Ի հարաւակողմն զձիթահանսն շինեաց: Զսուրբ Տաճարսն Հռիփսիմեայ և Գայիանեայ որպէս թէ նոր ի հիմանէ շինեաց, և զմիաբանս բնակեցոյց, որք յառաջ անբնակք էին լեալք: Որոց մաքուր նշխարքն սովաւ գտեալ և վերստին ամրափակեցան ի տեղւոջն: Եւ զդպրոցս մանկանց սրբոյ Աթոռոյս՝ որ յառաջ ի Յովհաննայ վանքն էր, սա եբեր ի սուրբ Աթոռս՝ և հաստատեաց. յորմէ ելին բազում երևելիք և գիտունք: Գրեթէ զամենայն վանօրայս Հայաստանեայց սա հաստատեաց ըստ ամենայնի: Եւ ի ՌՁԶ թուին գնաց յԱսպահան քաղաքն, և զսուրբ Աջ Լուսաւորչին մերոյ (զոր Շահ-ապասն մեծ տարեալ էր ընդ երկոտասան քարանցն սրբոյ Աթոռոյս, զի անդ շինեսցէ զէջմիածին ի ՈԿԴ թուոջն մերում) դարձոյց մեծաւ ջանիւ ի սուրբ աթոռս վերստին ի ՌՁԷ թուին: Այլ և ի ՌԵ թուին ելեալ գնաց յԵրուսաղէմ, և անդ զսուրբ Յակովբայ Աւագ խորանը բարձրացոյց, և զյատակ եկեղեցւոյն գոյնզգոյն քարիւ սալահարկ արար: Եւ ի ՌԵԲ թուին վերադարձաւ ի սուրբ Աթոռս՝ և սկիզբն արար մեծի զանգակատանն յարևմտեան կուսի, զոր և հասոյց ի ներքին կամարսն սիւնագլխաց»:[13]

Մեծ է Աղբակեցու հայրապետության տարիներին իրականացված շինարարական աշխատանքների աշխարհագրությունը: Իր կաթողիկոսության քսաներկու տարիների ընթացքում նա հասցրել է հետևել հաճախ էլ մասնակից լինել բազմաթիվ վանական համալիրների և եկեղեցիների նորոգման կամ հիմնարկման աշխատանքներին: Այսպես, էջմիածնում իրականացված վերոհիշյալ աշխատանքների շրջանակում նշելի է վանքի սեղանատան նորոգումը և նրան կից խցերի կառուցումը: Այս շարքում հիշատակության է արժանի Երևանի անապատում իրականացված լայնածավալ նորոգչական աշխատանքները: Այն հիմնականում փայտակերտ էր, բացի մի մատուռից, որը հայտնի էր իբրև Անանիա առաքյալի դամբարան: Անապատը հիմնովին վերանորոգվում է քարաշեն կառույցներով:

---

[13] Սիմէօնն կաթուղիկոսէ Երեւանցւոյ, Զամբ, էջ 22-23:

Մեծածավալ աշխատանքներ են իրականացվում Դարաշամբի ծորի Սբ. Ստեփաննոս Նախավկայի վանքում, որոնց սկիզբը դրվել էր Մովսես Տաթևացու, իսկ շարունակությունը՝ Հակոբ Զուղայեցու վարդապետ եղած ժամանակ:

Փիլիպոսի հրամանով հիմնովին վերականգնվել է նաև Երնջակի Սբ. Կարապետի վանքը, որի աշխատանքներն վերականգնվել և կառուցվել են բազմաթիվ շենքեր իրականացվել են վանահայր Եսայի վարդապետի գլխավորությամբ: Սա Փիլիպոսի հետ Սյունեցու աշակերտներից էր, իր վարդապետական և եպիսկոպոսական գավազաններն ստացել է Փիլիպոս կաթողիկոսից: Փիլիպոս կաթողիկոսի հրամանով մեծ աշխատանքներ են կատարվում Հովհաննավանքում, որոնք ղեկավարում է վանահայր Զաքարիա վարդապետը: Այս շրջանի մեծագույն արդյունքներից էր Մուղնի գյուղում Սբ. Գևորգ վանքի հիմնարկումը: Այստեղ կառուցվում է եկեղեցին, շուրջը պատվում պարիսպներով, իսկ դրան, կից՝ ներքուստ, հոգևոր, բնակելի ու տնտեսական շինություններ: Հազար վեցհարյուր քառասուն-հիսունական թվականներին լայնածավալ շինարարական աշխատանքներ են կատարվել Ուշիի Սբ. Սարգիս վանքում, Օշականում, Բջնիում, Աշտարակում (կամուրջ) Սյունիքի ու Նախիջևանի բազմաթիվ գյուղերում:[14]

Իր կատարած աշխատանքների մեջ հիշատակության է արժանի Շիրակից և Սևանից ջրանցքների կառուցումը. «Զուր մի յորդահոս ի յԱրագած լեռնէ բղխեալ ի Շիրակ կոյս ընթանայր ըստ բնականի ընթացմանն. այս երանելիս բազմաւ աշխատութեամբ շրջեալ զայն ի գետն Օշականայ ածեալ ի յաւելումն մերոյս ջրոյ, զոր և հարկ է արարեալ Շահ-Ապասին փոքր, բերէ ռաղամ՝ զի յատուկ սրբոյ Աթոռոյս լիցի այն ջուրն՝ որ լինի Ժ ջրաղաց ի ջուր: Այլ և սա յաւել զջուր ի Հրազդան (այս ինքն. Զանկի գետոյն) ի Սևանու ծովակէն, բանալով զյառաջն մեծաւ աշխատութեամբ և դրամածախութեամբ»:[15]

Պատմագիր Զաքարիա Քանաքեռցու վկայությամբ[16] Մահացել է 1655 թ., թաղվել Հռիփսիմեի բակում: Տապանաքարին ունի հետևյալ հիշատակագիրը.

Հազար հարիւր չորս թուին մարտի քսան և հնգին վախճանեցաւ հաղբակեցի Փիլիպոս սքանչելագործ կաթուղիկոս ամենայն հայոց եւ եղաւ սուրբ նշխարք նորա յայսմ շիրմի. որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի.[17]

---

[14] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, էջ 317-318,346-348,351:
[15] Նույն տեղում, էջ 23:
[16] Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հատոր երկրորդ, էջ 106-107:
[17] Մատենագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Առարատայ, աշխատասիրութեամբ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց,հատոր առաջին, էջ 264: Տես նաև՝ Փիմական տարեգիր. էջ 184: